[1] Դուրս գրման ամսաթիվ		
6	Դեկտեմբեր	2018 թ.
[4] Մատուցման ամսաթիվը		
6	Դեկտեմբեր	2018 թ.

Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	4388300783

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 41152118 քր գործով դատահաշվապահական փորձաքննություն	հատ	1	180000		180000
Ընդամենը						180000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

06/12/2018 16:37:04

Ո ր ո շ ում
Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

27 մարտի 2018թ. ք.Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության փոխգնդապետ Նարինե Հովհաննիսյանս, քննարկելով յուրացում կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցված թիվ 41152118 քրեական գործի նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

2016թ. հունվարի 1-ից 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Անահիտ Վարշամի Վարդազարյանն աշխատելով «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱ կազմակերպությունում՝ հաշվապահ, պաշտոնեական դիրքն օգտագործելով տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված 50.000 ՀՀ դրամ (պահումներով 37.800 ՀՀ դրամ) աշխատավարձի փոխարեն ամեն ամիս համապատասխան փաստաթղթերում իրեն որպես աշխատավարձ ձևակերպել և ստացել է շուրջ 74.600 ՀՀ դրամ՝ պետությանը պատճառելով խոշոր չափերով՝ շուրջ 883.200 ՀՀ դրամի վնաս:

Նկատի ունենալով, որ Անահիտ Վարդազարյանի արարքում առերևույթ առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար տվյալներ և ենթադրյալ հանցանք կատարած անձն էլ բացահայտված է, 2018թ. փետրվարի 8-ին ոստիկանության Կապանի բաժնում հարուցվել է քրեական գործ:

Քննության ընթացքում «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱ կազմակերպությունից առգրավվել է 2002թ-ից 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կազմված աշխատավարձերի հաշվարկման փաստաթղթերը, աշխատավարձերի վճարման բանկային քաղվածքները, ռոճկացուցակները, աշխատավարձերի հաշվառման տեղեկագրերը, փոխանցագրերը, 2014-2018թթ. տարիֆիկացիոն ցուցակները, Սյունիքի մարզպետարանից պահանջվել են 2002 թվականից 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզպետարանի կողմից «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անց կացված աուդիտի եզրակացությունները, 2002 թվականից 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզպետարան ներկայացված ֆինանսական (եռամսյակային, կիսամյակային և տարեկան) հաշվետվությունները և նշված ուսումնական հաստատության 2002-2014թթ. տարիֆիկացիոն ցուցակները:

Քրեական գործով անհրաժեշտ է պարզել, 2002-2018թթ. ընթացքում «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Անահիտ Վարդազարյանի կողմից կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վարման ընթացքում ի՞նչ խախտումներ է թույլ տվել, թույլ տրված խախտումները հանգեցրե՞լ են արդյոք ֆինանսական միջոցների յուրացման կամ վատնման, եթե այո, ապա որքա՞ն, որ միջոցներից են հափշտակվել, կատարվե՞լ են արդյոք չհիմնավորված ծախսեր, իսկ դրա

համար հարկավոր է դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքների իմացություն:

Ելնելքով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244-րդ և 248-րդ հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊ ընկերությանը /փորձագետ Նարեկ Հակոբի Գրիգորյան/:

2.Փորձագետին տրամադրել քրեական գործի քննությամբ «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱ կազմակերպությունից առգրավված 2002թ-ից 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կազմված աշխատավարձերի հաշվարկման փաստաթղթերը, աշխատավարձերի վճարման բանկային քաղվածքները, ռոճկացուցակները, աշխատավարձերի հաշվառման տեղեկագրերը, փոխանցագրերը, 2002-2018թթ. տարիֆիկացիոն ցուցակները:

3.Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ 2002-2018թթ. ընկած ժամանակահատվածում «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վարման ընթացքում ըստ հաստիքացուցակի որքան գումար է նախատեսված եղել Անահիտ Վարդազարյանի վճարման համար, փաստացի որքա՞ն է վճարվել վերջինիս:

բ/ Ո՞ւմ կողմից են թույլ տրվել հայտնաբերված խախտումները:

գ/ 2002-2018թթ. ընկած ժամանակահատվածում թույլ տրված խախտումների արդյունքում որքա՞ն է կազմում Անահիտ Վարդազարյանին վճարված հավելագրումների չափը:

դ/ Եթե փորձաքննության կատարման ընթացքում ծագեն հարցեր, որոնք հետաքրքրություն կներկայացնեն քննությանը, և մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրում եմ պատասխանել նաև դրանց:

4. Փորձագետին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդ. նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել կեղծ եզրակացություն տալու համար ,ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ Ն.Ա.Հովհաննիսյան